ԵՊՀ ԻՄ ՈՒԽ 2011-2012 ուս. տարվա II կիսամյակի գործունեությունը

Նախագահ՝ Նաիրի Ճաղարյան

2011-2012 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացքում ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը կատարել է հետևյալ աշխատանքները՝

1. Ստեղծվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհրդի լոգոն:
2. Կազմավորվել է ՈՒԽ վերստուգիչ հանձնաժողովը, և նախագահության անդամներից ընտրվել է վերստուգիչ հանձնաժողովի պատասխանատու:
3. ՈՒԽ սպորտի հանձնաժողովի կողմից ստեղծվել են մասնաճյուղային՝ ֆուտբոլի, վոլեյբոլի (աղջիկներ և տղաներ), բասկետբոլի, շախմատի (աղջիկներ և տղաներ), սեղանի թենիսի (աղջիկներ և տղաներ), հրաձգության, թեթև ատլետիկայի հավաքականներ:
4. Փոփոխման է ենթարկվել ԵՊՀ ԻՄ ՈՒԽ կանոնադրությունը:
5. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ՈՒԽ-ի կողմից կազմակերպվել է Մ. Մեծարենցին նվիրված գրական ցերեկույթ:
6. Կիրառական ֆակուլտետի ՈՒԽ-ի կողմից ուսանողների շրջանում անցկացված հարցումների շնորհիվ Դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի արվեստանոցի վարիչ Դավիթ Պողոսյանը ընտրվել է կիսամյակի լավագույն դասախոս:
7. Կազմակերպվել է մոմավառություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի զոհերի:
8. Համահայկական երիտասարդական հիմնադրամի Տավուշի մարզային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է սեմինար-քննարկում՝ <<ՄԻԱՎ և ՁԻԱՀ-Ի կանխարգելումը միգրանտների շրջանում>> թեմայով, որին մասնակցել են ավելի քան 100 ուսանող:
9. Օրհուս կենտրոնում կազմակերպվել է բնապահպանական թեմայով ֆիլմի ցուցադրում և քննարկում:
10. ԵՊՀ ԻՄ ՈՒԽ-ի կողմից ստեղծվել է տարեվերջյան քննությունների վերահսկման հանձնաժողով: